ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2022/256/1

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.05.2022թ. թիվ 26/26-1/9779-2022 գրությամբ «Ինո-Թեքնոլոջի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 20.05.2022թ. թիվ Ե/ՎՈՒ/862-22 գրության հիման վրա, 27.05.2022թ. թիվ 26/26-1/9779-2022 գրությամբ նախաձեռնել է «Ինո-Թեքնոլոջի» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Ինո-Թեքնոլոջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Ինո-Թեքնոլոջի» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Ինո-Թեքնոլոջի» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/256/1 ընթացակարգի շրջանակներում 22.06.2022թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 20.05.2022թ. թիվ Ե/ՎՈՒ/862-22 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք, որ 2022թ-ի ապրիլի 25-ից մայիսի 10-ը, ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շենքում տեղի է ունեցել համակարգչային տեխնիկայի և հարակից սարքերի ձեռքբերման նպատակով ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/96 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստը:

Ընթացակարգի շրջանակում հայտ ներկայացրած «Ինո-Թեքնոլոջի» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 01570457, հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Աբովյան 29, 3-րդ տարածք, հեռ.՝ +374 10 587534, +374 94 904994; էլ. փոստի հասցե՝ info@itech.am) կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ «Ինո-Թեքնոլոջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված մասնակցի իրական շահառուների հայտարարագիրը թերի է, մասնավորապես՝ լրացված չեն «4.5» և «4.7.2» կետերը:

Գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և 02.05.2022թ-ին eAuction համակարգի միջոցով՝ ծանուցմամբ «Ինո-Թեքնոլոջի» ՍՊԸ-ին առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները և https://eauction.armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովին ներկայացնել շտկված փաստաթուղթը՝ հիմք ընդունելով Հայաստանի

Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով սահմանված պահանջները:

10.05.2022թ-ին գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Ինո-Թեքնոլոջի» ՍՊԸ-ի կողմից 10.05.2022թ-ի դրությամբ և https://eauction.armeps.am համակարգի միջոցով սահմանված ժամկետում եւ կարգով չի ներկայացվել արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակը:

Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «Ինո-Թեքնոլոջի» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված պահանջները:

Համաձայն Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջների՝ «Ինո-Թեքնոլոջի» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում ենք Ձեզ՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ սկսելու նպատակով:

Միաժամանակ հայտնում ենք, որ սույն գնման ընթացակարգի շրջանակներում ձեռք բերվող գնման առարկաները ներառված են հաստատված գնումների պլանում»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/256/1 ընթացակարգի շրջանակներում 22.06.2022թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/256/1 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/256/1 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից կազմակերպվել է «ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/96» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ինո-Թեքնոլոջի» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 10.05.2022թ. նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող

հանձնաժողովն արձանագրել է, որ «Ինո-Թեքնոլոջի» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում և կարգով չի ներկայացվել արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակը և որոշում կայացրել Ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

3. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ներկայացրել է 20.05.2022թ.՝ թիվ Ե/ՎՈՒ/862-22 գրությամբ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 27.05.2022թ. թիվ 26/26-1/9779-2022 գրությունը, «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 20.05.2022թ. թիվ Ե/ՎՈՒ/862-22 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Այսպես, «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից կազմակերպվել է «ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/96» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ինո-Թեքնոլոջի» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ ***<u>10.05.2022թ.</u>*** նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Ինո-Թեքնոլոջի» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում և կարգով չի ներկայացվել արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակը և որոշում կայացրել Ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, Ընկերության տվյալները՝

համապատասխան հիմքերով, ***<u>լիազորված մարմնին ներկայացրել է 20.05.2022թ.՝ թիվ Ե/ՎՈՒ/862-22 գրությամբ:</u>***

Վերը շարադրված փաստերով պայմանավորված և հիմք ընդունելով «ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/96» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրությունը՝ Ընկերության հայտը 10.05.2022թ. մերժելու վերաբերյալ՝ արձանագրում եմ, որ «Ինո-Թեքնոլոջի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել ***<u>10.05.2022թ</u>***., սակայն, Պատվիրատուն Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել է լիազորված մարմին ***<u>20.05.2022թ.,</u>*** որպիսի պայմաններում Պատվիրատուի կողմից խախտվել է «Ինո-Թեքնոլոջի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը (այդ թվում՝ մասնակցի տվյալները) լիազորված մարմին ներկայացնելու՝ Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետը:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումը որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

Ընդ որում՝ համապատասխան ժամկետային սահմանափակումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և գործողությունների ժամանակին իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Այսպիսով՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում՝ Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

Այսպիսով՝ ժամկետային սահմանափակումները հետապնդում են իրավական որոշակիություն ապահովելու նպատակ, որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց:

Միաժամանակ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ սահմանադրական դատարանը 02.04.2014թ. կայացրած թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «... օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res

judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:

Վերը հիշատակված իրավական նորմերի նման մեկնաբանությունը բխում է նաև իրավական ակտերի որոշակիության սկզբունքից, որն իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հռչակված է ՀՀ Սահմանադրության թե՛ մինչև 25.12.2015թ. գործող խմբագրությամբ, թե՛ ներկայումս գործող խմբագրությամբ 1-ին հոդվածով, իրավական պետություն է:

Վերոգրյալ իրավական նորմերի մեկնաբանության և սույն գործի փաստական հանգամանքների համադրման արդյունքում արձանագրում եմ, որ տվյալ դեպքում Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետով սահմանված իմպերատիվ դրույթը՝ այն է հինգ աշխատանքային օր ժամկետը: Ընդ որում՝ օրենսդրությունը չի նախատեսում նշված ժամկետը վերականգնելու ինստիտուտ, հետևաբար, տվյալ դեպքում հինգ աշխատանքային օր ժամկետի խախտման հանգամանքները չեն դիտարկվում:

Նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Ինո-Թեքնոլոջի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.05.2022թ. թիվ 26/26-1/9779-2022 գրությամբ «Ինո-Թեքնոլոջի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**